

տելի չէր մնում: Ամենքը տեսնում, դիտում և երես էին թեքում...

Նոյն չափին է ընտրել իր համար և մի ուրիշ խմբագիր-հրատարակիչ, որը հանգիստ չէ տալիս Բագուին: Գնում, գալիս, էլ լինում, էլ չգալիս, և ամեն անգամ նոր կոմբինացիաներ, այլ և այլ կոմպոզիցիաներ՝ իր հրատարակչության ներքին փոփոխությունները դիտարկելով: Ներքին ընկած տեղը նա ևս մեկնում է «ձեռնոցաւոր» ձեռքը... Այս, համեմատաբար, սահմանափակ չորհուրդ և աւելի ձաքայիկ եղանակով տեղի ունեցող «մուրացկանություն» սկսել է նոյնպէս ուղարկութեան առնվել...

Ներկայումս հանդէս է եկել և մի այլ «մեծապատիւ մուրացկան»: Ասում են, դա եկել է շատ հեռուից: Այստեղ դրան համարեա չեն ճանաչում: Այդ պարտքը հեռու տեղից վեր է կացել հաղարատը վերստեր եկել նրա համար, որ այստեղ չբարեբախտիք զանե՛՛ հանդիսի հրատարակչությունը ապահովելու համար: «Ազգին մատուցած ծառայություններ» համար՝ այդ խմբագիրը իրաւունք է համարում ծանօթ-անձանցին մէջ խորություն չը դնել, դիմել, սակարկել, հաղարկելի պահանջներ ներկայացնել և վերջի վերջոյ հարկերն իջնելով՝ նոյն իսկ պարտք ինքնին...

Բաղդախի խմբագիրների այդ ըստ արշաւանքները միանգամայն զգուշացրել են տեղի բարեհոգի շարեքարտերին: Փոխանակ լրագրի բովանդակությունը ձեռնադրելու, փոխանակ ընկերական սկզբունքի և աշխատանքի բաժանման հիման վրա դրած կանոնադրելու, որպէս զի հանգէտը, ամառները անհրաժեշտ պահանջ դառնան ընթերցող հասարակութեան համար և իրանք իրանց մշտապէս ապահոված լինելով պատուար տեղ բռնեն լրագրական ասպարիզում, դրանք ընդհակառակը դանդաղան գծում և ստոր «օյննաբանություններով» նպատակադրման են դնում իրանց «մեծածառ արտադրությունները» մեծով փաթաթել հասարակութեան չլինելին և հիւթ ծծել—այսինքն այդպիսով: Եւ ինչու համար, կոյր փառաբանութեան, խմբագրի, հրատարակչի անուան տակ ձաքայիկ կերպով ձգտակերություն, մուրացկանություն անելու համար... Եւ այդպիսիները պիտի սերունդ իրեն, հասարակական կարծիք զեկալարեն, խեղճ հայ լրագրություն...

Ն. Կաթան

ՆԱՄԱԿ ԵՎԱՏԵՐԻՆՈՒՄԻՅ

Հոկտեմբերի 20-ին

Տան և չորս տարվայ բացակայությունից յետոյ, նորից այցելելով Եկատերինոգրադ, աւելորդ չեմ համարում իմ ստացած տպագրությունները երկու տողով հաղորդել «Մշակի» ընթերցողներին:

Ինչ էր Եկատերինոգրադը տասնուչորս տարի առաջ.—մի լուրջիկ քաղաք՝ եղեգնածածկ, մի յարկանի հասարակ շինություններով, որի միակ պարանոցը կալմում էին «կարմիր» կոչված փողոցում եղած մի քանի շինություններ մի շարք խանութներով, և աւելի ոչինչ:

Սակայն այժմ—ընդամենը ասան և չորս տարվայ ընթացքում—քաղաքը միանգամայն կերպարանափոխվել, գեղեցկացել, քաղաքակրթվել, առաջադիմել է և այն՝ հսկայական քայլերով: Գեղեցիկ, լայն ու սալաքայտակ փողոցներում փայլում է երկաթակաշի, եռյարկանի փառաւոր շինությունների երկար շարքը, գլխաւոր փողոցները լուսավորված են էլեքտրական լապտերներով, քաղաքը ունի ներկայումս արական և իգական կրթական գիմնազիաներ, բնական, ծխական և կիրճափորեայ դպրոցներ, թատրոնական փառաւոր շէնքեր, հիւանդանոց, խնամքարների և անկեայների տուն և այլն և այլն... աւելացրէ՛ք դրանք վրա և այն, որ Եկատերինոգրադը երկաթուղու գծով միացած է գրեթէ ամբողջ Ռուսաստանի հետ: Մի խօսքով, որ կողմը նայում ես, իսկոյն աչքն են ընկնում խաղաղ կուլտուրայի խոշոր ապացոյցներ, որոնք մարդուն հիացնում և ապշեցնում են:

Թէ քաղաքի և թէ չբնակալքի առևտրական գործը կենտրոնացած է ամբողջովին հայերի ձեռքում, ապացոյց՝ խոշոր առևտրական տների շարքը—Թորոսեան, Բագարուկեան, Շերշերեան, Խարա-Պիլեան և այլն... Համեմատաբար հայերը նիւթական աւելի ապահով դրութեան մէջ

են. սակայն այդ ապահով դրութեամբ հանդերձ, հայերը պարծենալու ոչինչ չունեն առաջադիմությունների գործում: Ինչ որ նկատելի է քաղաքի ընդհանուր կենսի առաջադիմության մէջ, տարաբախտաբար նոյնը չէ կարելի ասել հայ կոլոնիայի ներքին կենսի բարեփոխության, առաջադիմության մասին: Հայկական կենսը, հայ հասարակական գործունեությունն ասած բաները գոյություն չունեն այստեղ: Ոչինչ, կամ գրեթէ չինչ փոփոխություն տեղի չէ ունեցել հայոց կենսի մեջ: Վերջին տասնուչորս տարվայ ընթացքում: Որքան առաջինը—քաղաքի ընդհանուր կենսը, հասարակացի, դարգացի, քաղաքակրթվել է, նոյնքան, գուցէ և աւելի հայ-հասարակական կենսը մնացել է անփոփոխ, որի խօսքով ասենք՝ յետադիմել է: Նոյն «հաճե՛ք» հայերը, նոյն մայրենի լեզուին խորթ հնչիւնները, նոյն «ուրախ» ձայնը ծխական միջոցների զարկով—որը փակվող ընդհանուր զարգացման հետ—նոյն պոռոտախոս, դատարկաբան, չեռալուծական ու չքեղական ետնից ընկած հայերը:

Նոր սերունդը—երիտասարդությունը, որ ուրիշ հայաբնակ կենտրոններում քաղաքակրթություն տարածող—առաքելաւն է հանդիսանում, այստեղ, Եկատերինոգրադում, զբաղված է, ամբողջովին կլանվել է «խանութ-քաղաքով»։ դրանից դուրս ուրիշ աշխարհ, ուրիշ միջավայր միանգամայն անձանցին է նրան:

Ս. Օհանջանեան

ՆԱՄԱԿ ԽՄԻՍԿԻՆՈՒՄԻՆ

Կարս, հոկտեմբերի 25-ին

Խորին զուգորդով կարգավոր «Արձագանք» լրագրում (№ 98 և 118) «Գաղտն» և «Հայաստան» հայերի վերնագրով անդալակաւ գրադարանություններով լի յողուածները, որոնց ստոր թըղթակիցները քաջութիւն չունենալով իսկական անուանով հրատարակ դուրս գալ, վատերին յատուկ ամբողջութեամբ կամեցել էին անկեանները քաղաքի գեղեցիկ արտաւորել վիճակիս յաջորդ արժ, եղիւ՛ք վարդապետ Մուրադեանին, որը միակն է եղել մինչև այժմ Կարսի մեր տեսած յաջորդները մէջ իր անկարգաւի և եռանդուն գործունեութեամբ՝ սրբանով արտապայտում ենք մեր խորին ստեղծությունը թէ զգուշ այդ թղթակիցները և թէ այդպիսի վայրահաշուությունները հիւրընկալող թերթը:

115 ստորագրություն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊԵՐ

Կ. Պօլսի մեր թղթակիցը հաղորդում է, որ քաղաքից դուրս «Հայերեն» լրագրի արտոնատէր Յովհաննէս Շահադար, որը մի քանի ժամանակից ի վեր բանտարկված էր, արձակվեց բանտից:

Կ. Պօլսի «Փոռն» լրագրի մէջ կարգում ենք, «Արեւել խափանալ լրագրի գլխաւոր աշխատակից Բիւզանդ Ֆէնտի Բէշեան» որ բաղում տարիներէ ի վեր իւր զանազան գրուածներով բաղմանում է մէջ, առաջիկայ շարքում «Բիւզանդին» անուն օրաթերթ մը հրատարակել պիտի սկսի կայսերական հրամանաւ: Յարատւութիւն ու յաջողութիւն կը մտղթենք:» «Մշակի» Կ. Պօլսի թղթակիցը աւելացնում է, որ այդ լրագրի առաջին համարը արդէն լոյս տեսաւ: Դա նոյն Բիւզանդ Բէշեանն է, որին մեր Կ. Պօլսի թըղթակիցը համեմատեց մի թիւրք վարձկան հրատարակատիր հետ, և որին թիֆլիսի հայոց մի թերթ, իրան յատուկ լրբութեամբ, ջերմ պաշտպան հանդիսացաւ...

Ամսի 2-ին, կիրակի, մենք ստացանք Կարսից հետեւեալ հեռագիրը. «Այսօր տեղի ունեցաւ տեղական եկեղեցական-ծխական ուսումնարանի հանդիսաւոր օժուրը և բացումը: Ներկայ էր Կարսի գրեթէ ամբողջ հայ հասարակութիւնը, որը հրահանգով չբնակաւոր էր իր սիրելի յաջորդին, Մուրադեան վարդապետին, որի անխնայ աշխատութեան շնորհով չքուր քաղաքացիները զաղթականների հետ միասին արժանացան ձրի զարթոյն ունենալու:»

Թիֆլիսի քաղաքային դուռն մի քանի ժամանակ առաջ որոշել էր բախշել բնակիչներին

վրա մնացած 20,000 բուրդ ապուրի տուրքեր Նոյն կայսերական Մեծութիւնների թագադրութեան առիթով: Այժմ, թիֆլիսի պ. նահանգապետը տեղեկացրել է քաղաքային վարչութեան, որ ներքին գործերի միջոցաւ չէ հաստատել և փոխել է դուռնի որոշումը:

Երգչուհի Լուիզա Նիկիտա սուեց թիֆլիսում երկու կոնցերտ, որոնք անցան մեծ աջողութեամբ: Նիկիտա երգում է մեծ ճաշակով և մըշակել է իր ձայնը կատարելապէս: Այսօրտաւորային երգչուհիների մէջ նա նշանաւորներից մէկը կարող է համարվել: Նիկիտա եկել էր թիֆլիս և մի քանի տարի սրանից առաջ: Համեմատած առաջվայ հետ՝ նկատում է, որ նրա ձայնը ենթարկվել է փոփոխություն, բարձր նոտաների մէջ նա կորցրել է թարմութիւն, իսկ ընդհանրապէս ձայնը թանձրացել է: Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, երգչուհին պէտք է փոփոխ իր երգելու եղանակը և յարմարվի իր ձայնի ուղղութեան: Նոյեմբերի 1-ի կոնցերտում Նիկիտա մասնաւոր աջող էր թափում «Համէտ» օպերայից վերջում կտորի մէջ՝ Օֆելիայի տեսարանում:

Մենք հաղորդեցինք անցաւ անգամ, որ Գուրայիսում անցեալ տարի պատահած «հրկան անկարգություններ» գործի ընթացքում սկսվեց Գուրայիսի նահանգական դատարանում հսկումներ 16-ին: Դատարանի նիստը շարունակվեց մինչև հոկտեմբերի 29-ը և այդ օրը դատարանը յայտնեց իր վճիռը, որով 39 մեղադրվողներից 9 հոգի անմեղ են ճանաչված, իսկ 30 հոգի մեղաւոր: Վերջիններս դատաւարաւել են աւսորի Սիբիրի զանազան տեղերում:

Շարաֆ, նոյեմբերի 2-ին, թիֆլիսի Ժողովարանի դահլիճում կայացաւ կոյր երամիշտ Տիգրանեանի կոնցերտը, մասնակցութեամբ արիկին Ունտիլովայի, օրիորդ Լէվկայի, պարուներ Վիլչաուի և Սարալէվի: Կոնցերտանտ Տիգրանեան այս անգամ ևս աջողութիւն ունեցաւ և ծափահարութիւններով վարձատրվեց հասարակութիւնից: Կոնցերտին մասնակցողներից աչքի էր ընկնում Վիլչաու, որը ջութակի վրա կարողանում էր մեծ աջողութեամբ արտապայտել առիական երաժշտութեան նրբութիւնները: Կոնցերտը գրաւել էր բաւական հասարակութիւն:

Պետերբուրգից, նոյեմբերի 3-ից, «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագրին հեռագրում են, որ այնտեղ վարձանվել է զինարարական խորհրդի անդամ հայազգի գեներալ Ե. Կ. Ալեքսանով: Հանգուցեալ վերջին ուսումնական պատերազմի հերոսներից մէկն էր. նրան էր յանձնված Սուխու-մի գործառման հրամանատարութիւնը: Գեներալ Ալեքսանով ուսումնական պատերազմի ժամանակ իր ցոյց տուած քաջութիւնների համար ստացաւ ս. Գեորգի 3-դ աստիճանի շքանշանը: Հանգուցեալ Գ. Կ. Պետերբուրգից էր:

Նոյեմբերի 2-ին, շարաֆ օր, թիֆլիսի դատաստանական պալատում քննվեց մի հետաքրքիր գրականական գործ: Մեր ընթերցողները չեն մոռացել, որ 1888 թվին թիֆլիսում ինքնասպանութիւն գործեց կոմիսիոնէր Մանի և նրա ողբերգական մահը մեծ ցնցում առաջ բերեց հասարակութեան մէջ: Հասարակաց կարծիքը վերին աստիճանի յուզված էր մասնաւոր հաւատարմատար Պիլչիսկու դէմ, որի փաստաբանական անխնայ և անգութ հալածանքներից ստիպված, Մանի գործել էր ինքնասպանութիւն: Այդ առիթով «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագիրը մի յողուած էր տպել, մերկայանելով Պիլչիսկու անբարոյական վարմունքը: Վերջինս զանգատ սկսելով նախկին խմբագիր Ռուպինու դէմ, թիֆլիսի նահանգական դատարանը 1890 թվին արդարացրել էր Ռուպինովին: Սակայն թիֆլիսի դատաստանական պալատը փոխել էր դատարանի վճիռը ու դատաւարաւել Ռուպինովին, զրպարտութեան համար, տուգանքի և բանտարկութեան: Կատարելիչ սենատը ջնջել էր այդ վճիռը, ուստի գործը յանձնվել էր վերաքննութեան թիֆլիսի դատաստանական պալատին: Այդ քննությունը տեղի ունեցաւ նոյեմբերի 2-ին: Ռուպինովի մի երկար և աղղու ճառի մէջ այն միտքը յայտնեց, թէ այժմ, Մանիի ոսկանութիւնը 8 տարի յետոյ, նա հաստատ մնում

է իր այն կարծիքի մէջ, թէ Պիլչիսկու թաթխել է իրան մարդկային արիւնով, և այդ արեան անջնջելի արատը չէ կարող մաքրել նոյն իսկ դատարանի մեղադրական վճիռը, եթէ միայն այդպիսի վճիռ կարելի լինի ենթադրել և հրաւոր լինի «Պատմեցէք ինձ, ասեց մեղադրողը, ես չեմ կարող հաւատալ Պիլչիսկու մաքրութեան: Ինչպէս 8 տարի առաջ, նոյնպէս և այժմ, ես կարծում եմ, որ մարդատեցութիւնը—անթույլատրելի է, որ թշուաւ պարտականին տանջելը այնպիսի զարմանալի նրբութեամբ—ոճրագործութիւն է, որ աղաւաղել դատարանի նշանակութիւնը և նրան չինել իր անձնական զոռած հաշիւների կողմնակից—արեւադրութիւն է:» Դատաստանական պալատը երկար խորհրդակցութիւնից յետոյ, վճեց ճանաչել Ռուպինովին մեղաւոր զրպարտութեան մէջ և ենթարկել 13 օրվայ բանտարկութեան: Ռուպինովի մատուցի էր իրաւը ներկայացնել սենատի վճիռաւինը բաժնին:

10-ի գաւառի Շահալի գիւղից մեղ գրում են. «Երկար անձրևներից յետոյ այստեղ ձիւն եկաւ, այնպէս որ բոյսերի տերևները ցրտից դեղնեցին: Գիւղացիների վիճակը շատ վատ է. ամբողջ 6—7 ամիս աշխատելուց յետոյ, ստիպված են հաց առնել: Գեղի, պտղատուների Օձանի և Մարցի գիւղերի արտաւել կարկուտը տարել է և խեղճ գիւղացիները միայն յարը են ստացել, այնպէս որ ստիպված են նոյն իսկ սերմացուն գնել:»

ՆՈՐ-ՐԱՅԱՋԻՏԻՅ մեղ գրում են. «Նոր-Բայաղէտի և Շարուի-Գարալագեալի սահմանադրութեան Սէլիմ կոչված տեղում, թուրք աւաղանապետ Էլալը՝ երեք թուրք ընկերներով, մի շարք վայր ընթացում, իւրաքանչիւր օր, մի շարք կողովուրդներ կատարեց, զխաւորապէս կողոպտվեցին Նոր-Բայաղէտի վաճառականները և էլապանները, որոնք յանձնելով աւաղաններն իրանց փողերը, ձիւրը և հագի շորերը՝ հագու աղաւեցին իրանց կենսը: Հոկտեմբերի 28-ին, քաղաքից մի քանի վերստալի հեռաւորութեամբ, Ղաթուրդայա կոչված ճանապարհի վրայ, 14 զինված քիւրդ աւաղաններ (անկական ջալացիներ) կողոպտեցին տեղացի էլապաններին, տարան 1,000 բուրդի փող, 700 բ. ձոթիկէն և այլ ապրանք, եօթ ձի և 14 էջ: Ջալալիք քիւրդը առաջին անգամ չէ, որ մեղանում աւաղանութիւններ են անում. դրանք մեղ լաւ ծանօթ են: Մինչև այժմ ոստիկանութեան ձեռք առած միջոցները ապարդիւն են անցել:»

ՎԵՐԻՆ-ԱՂԱՆ գիւղից մեղ գրում են. «Մեր գիւղի հասարակութիւնը անհամբեր սպասում է նոր տանուտէրի հաստատվելուն իր պաշտօնում. շատ գործեր մնացել են թերի և անկատար, շնորհիւ հին տանուտէրի թուլութեան:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսից մեղ գրում են. «Թիւրք դատարաններում գործելու ժամանակ, պետութեանց դեսպաններուն երկրորդ թարգմանները մինչև վերջը ներկայ կը գտնուին և մանրամասն տեղեկագիր կը ներկայացնեն իրենց պետերուն: Ստորջ արդիւրէ տեղեկացած եմ, որ այդ տեղեկագիրները մի առ մի կը նկարագրեն թիւրք դատարանին խայտառակութիւնները և մասնաւորապէս ուսանական թարգման պ. Մայքօֆ իր տեղեկագիրներուն մէջ ամենախիտ քննադատը կը ներկայանայ արձակուած անիրաւ վճիռներու մասին: Սակայն պետութիւնները տակաւին լուրջ բան մը չեն կրնար ընել նոյն իսկ իրենց մօտէն չօչափած անիրաւութիւններու դէմ:»

Հեռագիրներէ արդէն յայտնի է թիւրքաց ոստիկանական նախարար Նազըմ փաշայի պաշտօնակութիւնը: Յաջորդ նշանակուած է վրձնաւել տեսանի նախագահ Շէֆիք պէյ, մոլեռանդ իսլամ և կարծ թուրք մը: Այս պաշտօնակութիւնը զանազան մեկնութիւններու առիթ տուած է: Ամեն պարագայի մէջ այս անկումը սարսափելի է բուսպետութեան նեղուկներուն համար: Այս պիտի ըլլար վեց տարւան հաւատարմական ծառայութեանց վարձատրութիւնը:

Կ. Պոլսում յայտնի Նորեան էֆէնտի նոր գիրք մը խմբագրած է Սահմանադրութեան դէմ, որ պիտի հրատարակէ մօտերս. պարունակութիւնը յայտնի է. «Թէրջիմանը Հազիզաթի» մէջ հրատարակած յօդուածով ինչ որ ըսած էր Սահմանադրութեան նկատմամբ, աւելի ընդարձակօրէն կը բացատրէ այդ գրքին մէջ: Իսկ կառավարութիւնը մէջ չարքիւնան մէջ իրարու հակառակ երկու հրաման տուաւ. Պատրիարքական ընտրութեան մասին, նախ իրատէ մը հրամայեց Սահմանադրութիւնը վերաքննել և յետոյ պատրիարքի ընտրութեան ձեռնարկել. ետքը ուրիշ իրատէ մըն ալ առաջինին հակառակ հրատարակեց, որ պատրիարքական ընտրութիւն կատարուի, Ազգային ժողովը գումարումով սահմանադրութիւնը անպատճառ վերաքննել: Այս վերջին իրատէն դեռ գործադրուած չէ, որովհետեւ գործադրութիւնը կը վախճան որ... նոր իրատէ մըն ալ չը ստանան:

«Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, թէ անգլիական կառավարութիւնը դիմել է մեծ պետութիւններին մի քանի առաջարկութիւններով թիւրքաց զորքերի վերաբերմամբ: Ինչի մէջ են կայանում այդ առաջարկութիւնները, դեռ յայտնի չէ, բայց, հասնողին, նրանց էտթիւնը չուտով կը բացատրվի Նէիզիօվի Պետերսըզ գնալուց յետոյ:

«Daily Graphic» լրագիրը, խօսելով Կիպրոս կղզու դաշնագրի ջնջման մասին, հետեւեալ է հաղորդում. «Ռուսաց կառավարութեան յայտնած կարծիքը, թէ 1878 թիւ անգլո-թիւրքական դաշնագիրը Կիպրոսի վերաբերմամբ համարվում է Անգլիայի դէպի ռուսաց քաղաքականութիւնը տածած անվտանգութեան ապացոյց, արագացրել է օրդ Սուլթանի օրոշումը այդ դաշնագիրը ջնջելու: Սակայն հրաժարվելով Կիպրոսից, բրիտանական կառավարութիւնը չի հրաժարվի Փոքր-Ասիայի վերաբերմամբ այն քաղաքականութիւնից, որ վարում էր Բիկոնսֆիլդ անգլո-թիւրքական դաշնագիրը կնքելուց առաջ տեղի ունեցած բանակցութիւնների միջոցին: Ընդդէմ Սուլթանի վճիռը այդ դաշնագիրը ջնջելու մասին հարաւորութիւն է տալիս Անգլիային և Ռուսաստանին համեմատութեամբ գործել այն լուրջ խնդիրների լուծման գործում, որոնք առաջ են եկել Թիւրքիայում տիրող վատ բէմիմից: Ընդդէմ Սուլթանի տալիս է Ռուսաստանին իր վտանգութեան ապացոյցը»:

Կ. Պոլսից հեռագրում են «Temps» լրագրին հոկտեմբերի 21-ից. «Հանապարհօրոյցները հաղորդում են, որ սեպտեմբերի կէսին Ազաթաբադ քաղաքը, որ գտնվում է Բագուսի վիլայէթում, Անատոլիայի ճանապարհի վրա, ենթարկվել է յարձակման 3,000 չէքէզների կողմից, որոնք մտադրված են կոտորել այդ քաղաքի ամբողջ հայ ազգաբնակչութիւնը և կողպտել չուկան: Բարեբաղդար, նոր մոլեհասարկ Բաֆու, մի շատ եւանդաւան և խեղճ քրիստոնէական յայտնի օգնական համար կանգնած զինուորական ուժերը: Չօրքի առաջ չէքէզները նահանջել են, բայց մինչև այժմ էլ սարսափել տիրում է ամբողջ նահանգում և հայերը չեն ըմբռնում իրանց խնամքներում ու զուրս չեն գալիս իրանց տներէից»:

Վերջերս, ինչպէս յայտնի է, շատ յամառ կերպով տարածված է այն լուրը, թէ անգլիական կառավարութիւնը, կանխադրելով ասացուցանել իր անշահախնդրութիւնը հայոց հարցում, մտադիր է հրաժարվել Կիպրոս կղզու դաշնագրից և զբաղվել ձեռք բերել Ռուսաստանի անկախութիւնը՝ արեւելեան հարցը վերջնականապէս լուծելու համար: Սակայն, հակառակ այդ լուրերին, «Times» լրագրի մէջ տպված է հետեւեալ նկատողութիւնը. «Մենք հնարաւորութիւն ունեցանք ամենաստույգ պարբերից իմանալու, որ ոչ մի հիմք չունի այն լուրը, թէ թաղուհու կառավարութիւնը օրոշել է թողնել Կիպրոս կղզին: Ոչ մի զեկուցում այդ մասին կառավարութեան արված չէ և ոչ մի ծրագիր այդ ուղղութեամբ չէ նախատեսվում»:

Թիւրքահայերի պատրիարքի ընտրութեան առիթով եւրոպական լրագիրները հաղորդում են հետեւեալը. «Հայոց պատրիարքի ընտրութեան

լուրը տարածվեց Կ. Պոլսում դեռ հոկտեմբերի 25-ին. ասում էին մի և նոյն ժամանակ, որ ընտրութիւնը պէտք է կայանայ հէնց այդ օրը: Ասում էին նոյնպէս, որ ընտրողական գործողութիւնները, որոնք սովորաբար շարունակվում են երեք շաբաթ, այս անգամ պէտք է վերջանան մի քանի ժամում: Հաստատում էին նաև, որ ազգային ժողովը, որ բաղկացած է 120 անդամներից, այս անգամ պէտք է ունենայ միայն 19 անդամ, որոնցից կառավարութիւնը իր կողմից զուրս է հանել չորսին: Կառավարութեան կանդիդատները հետեւեալներն են՝ տեղապահ Բարթոլոմէոս, նախկին պատրիարք Ազեզեան, Մուրադեան Եգիւկոսը և Սուրբիսեան Եպիսկոպոսը: Ռուրջ կանդիդատներ հանդիսանում են Յովհաննիսեան և Ալեքսանդրեան Եպիսկոպոսները, Երուսաղէմի Եպիսկոպոս Խաչատեան և, վերջապէս, Օրմանեան:

Կ. Պոլսում այս օրերս ձերբակալվել են արտասահմանից եկած չորս հայեր: Արքայապետը ներքը պաշտօնակալում էին արտասահմանից եկած չորս հայեր: Այդ հանգամանքը սարսափ առաջ բերեց բաղադրում:

Կ. Պոլսից հաղորդում են, որ Միացեալ-Նահանգների դեսպանը պահանջում է Բ. Դոնից 200,000 ֆրանկ վարձատրութիւն՝ պարսկական սահմանապահի վրա բերվելի ձեռքով սպանված Ֆրանց Լէյնցի համար:

Անգլիական «Daily News» լրագրի թղթակիցը պետիստական ոճով է խօսում Ֆրանսիայի ազգային ժողովի այն նիստի մասին, որ նուրբիւն էր Թիւրքիայի զորքերին Հասարակութիւնը միայն լուր հանդիսատես էր և աւելի բազմաթիւ չէր, քան հետեւեալ նիստի օրը, երբ քննվում էր խաղողի և դիմի խնդիրը: Երբ ժողովը սկսեց խորհուրդներ անել, ես լսեցի հարեաններիս բացառապէս խնդիրները. «Կարձեալ ժողովը սկսեց իր չափազանցութիւնները: Մինչդեռ Տուրքիայի նախկին պրիմիստը (ժողով) միայն զուտ ձգարտութիւն էր պատմում և հաղորդում էր այն, ինչ շատ անգամ կրկնվել է Անգլիայի միտինգներում: Ժողովի ճառը նշանաւոր քաղաքական ճառերից մէկը կը մնայ: Ֆրանսիական ազգային ժողովի այդ օրվայ նիստին ներկայ էին, ի միջի այլոց, Նուբար փաշան, հայր Շարման և բազմաթիւ հայեր:

«Börsen Courier» լրագրի խօսքով, Կ. Պոլսում հիւպատոսներից, կաթողիկոս հոգևոր միտինգներից և ուրիշ արժանաշատ անձերից ստացված տեղեկութիւնները նկարագրում են Փոքր-Ասիայի զրուրթը ամենատնտես գոյնով: Չը նայելով լաւ հուճիկ, շատ տեղերում ազգաբնակչութեան աղքատութիւնը այնքան մեծ է, որ վախեցում են տարաբնույթի հիւանդութիւնների տարածվելուց վատ մեղմելի և մինչև անգամ սովի պատճառով: Հայաստանում ազգաբնակչութիւնը դեռ ևս չէ հանգստացել, որովհետեւ Թիւրքաց բարձր պաշտօնեաները, որոնք ուղղակի կամ անուղղակի պատասխանատու են Թիւրքերի անցեալ տարվայ դաշնութիւնների համար, մնում են իրանց պաշտօնների մէջ, մի քանի, որ շատ կը դժուարացնի բէֆօրմներ իրազեկումը: Բ. Դոնի ֆինանսական փորձերը, չը նայելով պետութիւնների բոլոր բողոքներին, նպատակ ունեն ցոյց տալ պետութիւններին, որ յամենայն դէպս Բ. Դոնը կարող է առանց նրանց օգնութեան էլ գործել: Չանազան քաղաքներից տեղեկութիւններ են ստացված, որ Թիւրքաց վարչութիւնը ուղղակի սպառնալիքներով հարկադրում է մինչև անգամ քրիստոնէական վաճառականներին «կամար» նուրբատութիւններ անել ներքին փոխառութեան համար:

Կ. Պոլսից ուսաց գործակալութեանը հեռագրում են, որ հայերին, լրագիրներին միջոցով, պաշտօնապէս առաջարկվում է ուղարկութիւն չը դարձնել այն սուտ լուրերի վրա, որ տարածում են չարամիտ մարդիկ, հանդուրժութիւն պահել և կատարել վտանգութեամբ ու խաղաղ կերպով դառնել իրանց գործերով: Այս պաշտօնապէս հաղորդում է, որ սուրբանը հրամայեց Փոքր-Ասիայի բոլոր աղքատ գիւղացիներին անխոր բաժանել՝ վերջին խառնակութիւնների ժամանակ յնամարմնների օգտին ստորագրութեամբ հաւաքած փողը:

Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են. «Թիւրքաց պետական զանձարանը դատարկ է: Ֆինանսների միտինգի ուղարկած չը քաղաքականը գենեալ-հանդապետներին, որով հրամանագրում էր Կ. Պոլսի ուղարկել նրանց մօտ գտնվող գումարները, անհետանք մնաց, որովհետեւ գենեալ-հանդապետները չը գիտեն որտեղից վերցնեն պահանջվող գումարները: Շրջաբերականի հետեւեալ միայն այն էր, որ հարկերը սկսեցին անինչ կերպով առնել: Երբ գիւղացիները միջ չեն ունենում, բոլոր նրանց աղքատիկ դոյրը աճուրդի է դրվում: Թիւրքաց պաշտօնական անձինք յայտնում են, որ բէֆօրմներ իրագործելու համար հարկաւոր է փող, իսկ նոր փոխառութեան վրա, աւագ, յոյս դնել չէ կարելի: Նորբա մի թիւրք պաշտօնեայ նկատեց, որ ամբողջ Եւրոպայի կարծես խօսքը մէկ է աւել տաւանաւորել Թիւրքիայի ֆինանսական կողմից: Ֆինանսների զրուրթը յիշուի կրկնակաւ է և արդէն լուրեր են պտտում, որ Թիւրքաց կառավարութիւնը ստիպված կը լինի դադարեցնել պետական պարտքի տոկոսների վճարումը»:

Վիէնայի «Neue Freie Presse» լրագրի Պարիզի թղթակիցը հեռագրում է. «Երէկ Լոնդոնի ռուսաց դեսպանը պաշտօնական կերպով հաղորդեց անգլիական արտաքին գործերի միտինգութեանը ռուս ֆրանսիական առաջարկութիւնները՝ Թիւրքիայի ֆինանսական զրուրթը կարգի բերելու համար: Բոլոր հարկերը, մենակաւառութիւնը և մաքսային տուրքերը «Dette Publique»-ի վարչութիւնը պէտք է ստանայ, որի հեղինակութիւնը կընդարձակվի և օրին կը յատկացվի պետութիւնների օրգանի պաշտօնական բնակարաններին: Աւելորդ գումարները կը յանձնվեն Թիւրքաց կառավարութիւնները: Այդ նշանակում է, որ ամբողջ ֆինանսական վարչութիւնը և մասնաւոր հարկերը պէտք է ստանայ եւրոպական պարտատէրերի յանձնաժողովը: Յայտնի չէ դեռ, թէ արդե՞ք սուրբանը իր համաձայնութիւնը տուեց այդ առաջարկութեանը, բայց անվիճելի է, որ Թիւրքիայի ֆինանսական «առողջամտ» հարցը այժմ հերթական է: Նոյնպէս անկասկած է, որ այդ փաստը կայ ունի Թիւրքիայի քաղաքական նախագծերի և մասնաւոր վարչական բէֆօրմների հետ:

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ
(Քաղաք Կ. Պոլսի լրագրից)

«Հոսթիական ազգայնոց Պատրիարք» յատուկ գրով մը Մեծ Եւրոպային մատուցած է՝ Սըվա-սի և Թոգատի հոսթիական Առաջնորդ Հանձնախորհրդի արքեպիսկոպոսի, և Սըվա-սի մէջ ժամուհանապարհ հեռի Բըրընդի գիւղի (բոլոր բնակիչը՝ Հայ Հոսթիական) թաղական խորհրդի կողմանէ Սըվա-սի կուսակալութեան մատուցեալ թղթոյ պատճեններն, որովը հարկաւորութիւն հայրական խնամք ու հոգածութեան համար, և գոհութիւն՝ յիշեալ գիւղի հաւաքել Արքահանձնարարի հրացան, երկու Կարատաղի բէլլովը, երկու վրացի գտակ և «Բոչակ» լրագրի հանուրում համար, առանց որ և է խոսված տեղի տալու Հանձնախորհրդի իւր գոյն մէջ ծանուցել է թէ՛ Օրացոյցն ալ փոխած և լատինական թուական գործածել սկսած է, որպէս զի Հայ խոսակարարութիւն՝ Հայ կաթողիկոսներուն մէջ չը տարածուի, և թէ՛ իրեն հրամայուած է նորմը ալ խոսվարներն»:

«Բարձր. Տեղապահ Հայր» չորեքշաբթի ուտի-կանութեան նորընտիր նախարար Վսեմ. Շէֆիզ պէյի այցելեց ի հորհուրդութիւն»:

«Տեղապահ Թիւրքիայի Հայոց հոգևոր հովիւ Յովսէփ վարդապետ Ալվազեան» մայրաքաղաքս եկած է»:

«Արմաշի գլխավորանոց վերադառնալ Մաղաբիա Սրբազան, և տեսուչ Նիլիէ վարդապետ Գուրան» մայրաքաղաքս եկան: Վսեմի տեսուչութիւնն առժամանակայ կերպիւ յանձնուած է Մամբը վարդապետի:

«Պատրիարքական Գեր. Գիւրգիս» երկու-շաբթի և երեքշաբթի ռուսական դեսպանատան մատրան մէջ Աղքատաբար Գ. Կայսեր մահուան, և ներկայ Կայսեր գահակալութեան տարեդարձի բարեմաղկական արարողութեանը ներկայ գրաւուեցաւ»:

«Պաշտօնակալն. «Վաճառականութեան ու հանրային յիտաւոց նախարար Մահմուդ ձեւալեալին փաշայի նախագահութեամբ ընդհանուր յանձնաժողով մը կազմուած է՝ Օսմանեան Ռէ-տիֆ զօրաց զինարանաց զգեստներն, զէնքերն և այլ պէտքերն կատարելապէս լրացնելու մասին մինչև ցարդ տէրութեան ըրած հոգողութեանց համար՝ Ժողովրդեան նիւթական օժանդակութեան զիմելու պաշտօնով: Նահանգաց ու գաւառակաց մէջ ալ երեւելիներէ մասնաժողովներ պիտի կազմուին և տոմսեր պիտի զըրկուին, փոխադրելու ապահով ու կանոնաւոր կերպիւ Կ. Պոլսի զրկելու յանձնարարութեամբ:— Ըստ սկզբան, միայն Ռէտիֆ զօրաց պիտոյից յատկացեալ այս նպատին՝ առանց որ և է բռնադատութեան, ոչ—մահապատկանաց մահակցութիւնն ալ դահադուցիչ պիտի ըլլայ: Տոմսերը պիտի ըլլան 5, 10, 30, 40, 50, և 100 դրուշանոց, ի բաց առեալ՝ հայրենասիրաբար աւելի տուողներն 2000 դրուշ և անկէց աւելի նպատաւորներուն պիտի ընծայուի չքաղամ, ի նշան գոհութեան՝ անունները վրան քանդակուած: Օրոշատարաւ Սուլթանն 2000 նորահար հրացան գնեց և նուրից (?) կայսերական զինանոցին (?) և այս անգամ ալ հրամայեց գնել 10000 ալ և այլ շնորհներ ալ պիտի ընէ զինուորական կարևոր հաստատութեանց պիտոյից հայթաթման համար»:

ՆԱՍՏԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզի հոկտեմբերի 23-ին Այս օրերս Երկրագիւղ զարգացնելու ուսուցիչները տեսչից ժողովի են հրաւիրուած, որ վերջինը առաջարկում է նրանց Թաւրիզում հրատարակել մի թիւթ: Երկար փնտրանքութիւններից յետոյ վճռվում է ընտրել մի մասնաժողով, որ քննէ այդ հարցը և իր զեկուցումը տայ ընդհանուր ժողովին:

Ներկայումս Թաւրիզում գոյութիւն ունեցող մի քանի ընկերութիւններից նշանաւոր տեղ է բռնում Լիւալայի «Կանանց ընկերութիւնը»: Այս տարի այդ ընկերութիւնը բաց արաւ մի մանկակաւն պարտէզ, որ, ինչպէս երևում է, օրինակելի պիտի լինի: Մանկական պարտէզում երեխաները պիտի ճաչեն ընկերութեան հաւաք: Լուսն էնք, որ Թուրանեանց գործակալներից պ. Բաղդասար Մ. Սարգսեան ընկերութեան օգտին հանգանակել է մի խոշոր գումար, մօտ 6000 ռուբլի. կը նշանակի թէ ընդ միշտ ապահոված է ընկերութեան նիւթականը: Ընկերութիւնը խրախուսվելով դրանով, վճռեց օգնութեան ձեռք կարկառել խեղճ թիւրքահայ գաղթականներին, որոնք հաւաքված են Սալմաստում: Ընկերութիւնը յանձնում է իր անդամներից մէկին 250 թուան (500 ռ.) կանխիկ փող և մօտ 20 բեռն հազարտեղէններ, որ տանէ հասցնէ Սալմաստ և իր ձեռքով շորերը բաժանէ մերկերին, իսկ դրամով ցորեն գնելով, ապահովէ նրանց կեանքը: Գովելի գործը Յանկանը, որ այդ ընկերութիւնը միշտ աջողութիւն ունենայ և մի և նոյն ժամանակ իր բարեգործութիւններով օրինակելի դառնայ Պարսկաստանի համար:

Արշակունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Nar. List.» լրագիրը մի շատ կարևոր լուր է հաղորդում, այն է, իբր թէ սուրբանը զիջել է սերբական թագաւոր Ալեքսանդրին և չէնօգործական իշխան Նիկոլային իր այն վեհապետական իրաւունքները, որ Բերլինի դաշնագիրը տուել է նրան Բալթիայի և Հերցեգովինայի վրա: Եթէ այս լուրը ստուգվի, տարակույս չը կայ, որ աւստրո-ունգարական քաղաքականութեան մէջ Բալթիայի թիւրքական վերաբերմամբ նշանաւոր փոփոխութիւն տեղի կունենայ:

«Pall-Mall-Gazette» լրագրին հաղորդում են Կոպէնհագենից, որ Գանիան և Ռուսաստանը կապել են իրանց մէջ «գաղտնի բանաւոր» դաշնագրութիւն, որի զօրութեամբ Ռուսաստանը եւրալուստրում է գանիական թագաւորի երկիրների անձեռնմխելիութիւնը և խոստանում է, յարմար դէպքում, սնդել, որ Գանիային վերադարձվի հիւսիսային Շլէզվիգը, եթէ աղքատաւորութիւնը ձայնաւորութեան միջոցով այդպիսի ցանկալիւն յայտնէ: Իսկ Գանիան պարտաւորվում է այն դէպքում, եթէ Ռուսաստանը պա-

տերազմի բռնակի մէկի հետ, զնէլ նրա արամա-
դրութեան տակ ժամանակաւորապէս կ'օգտնուե-
ղէն մայրաքաղաքը իր ամբողջ պատերազմական
միջոցով, նաւահանգիստներով, ամրութիւննե-
րով և այլն: Ալեքսանդր III կայսրը իբր թէ
կտակել է այդպիսի դաշնագիր Գանիայի հետ: Այդ
պատճառով, և հակառակ ներքին պալատի բողո-
քին, կ'օգտնուեցին ամրութիւնները նորագոյն
և մեծ ծախս արին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՅԻՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԹՈՒՄ, 1 նոյեմբերի: Նահանգական վար-
չութիւնը, օգնութիւն ստանալով հետեակ կա-
զմակերպի մի զօրաբաժին, սկսեց հալածել և կա-
լանաւորել աւազակներին: Սադրէտի մօտ, ան-
տառու, վրա հասան այն աւազակներին, որը
գերի էր վերցրել յոյն Գանիայի և փրկանք
առնելով արձակել էր: Հրացանաձգութեան ժա-
մանակ երկու աւազակներին սպանեցին, մնացած
ներին բռնեցին: Այն աւազակներուն հետ ընդ-
նված է, որը յարձակուել էր ինժեներ Պատկի-
վրա և կողոպտել էր Բուքոի ամրանոցը: Աւա-
զակները խմբապետ Մեղիւ-օղլի սպանված է:
Բորժոմի բանտից փախած յանցաւոր Շաքիր-օղ-
լին բռնված է:

ԼՈՆԴՈՆ, 1 նոյեմբերի: Հիւղատանի գործերի
ստատու-սեկրետար Համբլան Ալտոնում մի
հաս արտադրանք, որի մէջ հաստատեց Սուրբի-
րիի նկատողութիւնը, թէ Անգլիայի և Ռուսաս-
տանի մէջ անլուծելի վէճեր չը կան, թէ Ռու-
սաստանը այն երկրներէն մէկն է, որի վերա-
բերմամբ չը կայ ոչ աղգային զգուշացում, ոչ ար-
դիւնաբերական և զաղթականական մրցում, և
լաւ կը լինէր, եթէ գերմանական մամուլը ըն-
դունէր այդ փաստերը: Նա չը պէտք է Անգլի-
ային համբերութիւնից զուրս բերի իր մշտական
յարձակումներով:

ՀԱՌՄ, 2 նոյեմբերի: Սերիական թագաւորը
կը ժամանի այստեղ նոյեմբերի 25-ին:

ՀԱՌՄ, 2 նոյեմբերի: Հրատարակւած է Մա-
կարի ներկայացրած զեկուցումը պալլին՝ իր մի-
սիայի վերաբերմամբ Աբխազիայում: Օգոստոսի
22-ին Մենելիկի մօտ ունեցողութիւնից յետոյ,
որի ժամանակ Մակարը յանձնեց պալլի նամա-
կը, Մակարը օգոստոսի 28-ին մասնաւոր խօ-
սակցութիւն ունեցաւ Մենելիկի հետ, որի ժա-
մանակ Մենելիկը համաձայնութիւն յայտնեց ա-
զատութիւն տալ ըստ գերիներին, բացի օֆի-
ցէրներէն: Հետեակ օրը լուր տարածվեց, որ
գերիները, առանց օֆիցէրներին, ազատութիւն կը
ստանան և կ'օգնուին զէպի Զիբուտ երկու շա-
բաթից յետոյ: Բայց սեպտեմբերի 5-ին Ազիսա
բէք հասաւ մի սուրհանդակ և յայտնեց, թէ
«Ինչիկի» գրաւեցին Ազիսա զանազան տարօր-
նակ լուրեր տարածվեցին իսախայի զիսաու-
րութիւններին մասին: Աբխազիայի վերաբերմամբ
և իսախայի զինուորման մասին: Այդ լուրերը մեծ
յուզմունք և ընդհանուր երկիւղ առաջ բերին:
Նէգուս գումարեց մի բազմամարդ խորհուրդ, որը
մի քանի օր նիստեր էր կայացնում: Սեպտեմբե-
րի 5-ին Մենելիկի անտանից հաղորդվեց Մակա-
րին այն պատճառով, որով արգելւում է գերիներ-
ը ազատութիւնը:

ՎԻԵՆԱ, 3 նոյեմբերի: Սերանից հեռագ-
րում են, որ հեղեղումները մեծ աւերածնեցն
պատճառեցին:

ՆԻՒԵՐՈՒ, 3 նոյեմբերի: Սերանից, Բօլի-
վիայում, հեռագիրը հաղորդում է, թէ կոնգրեսը
վճիռ կայացրեց, որով կուրան համարվում է
պատերազմող կողմ:

ԲՈՒԼՈՆ, 3 նոյեմբերի: Աղքատութիւնը Հնդ-
կաստանում մեծ չափեր է ընդունում: Հացի գի-
նը բարձրանում է: Բժուկը ժամատարում մեծ
զոհեր է տանում:

ԱԿԷՆ, 4 նոյեմբերի: Այստեղ յամառութեամբ
լուր է պատում, որ իսախայի և Աբխազիայի
մէջ խաղաղութիւն է կայված: Ասում են, որ
սկզբնական պայմանները ստորագրված են հոկ-
տեմբերի 4-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի: Պետական աղ-
նական կալուածական բանկի տիրաժ զուրս ե-
կած տոմսակները. 1610, 7365, 12589, 15,
5534, 7035, 8366, 3662, 6652, 3878, 6031,
934, 15388, 200, 544, 5136, 15048, 9572,
10605, 3843, 12753, 2669, 5568, 5274, 5843,
10336, 13599, 5086, 15984, 430, 7664, 9231,
9073, 13636, 8336, 7258, 12278, 13881, 12101,
11074, 11656, 11773, 11663, 1120, 8372,
14793, 8247, 9475, 5604, 5029, 2774, 4033,
9982, 7287, 2844, 4211, 6164, 6228, 11549,
11516, 422, 9298, 633, 7858, 12239, 4413,
899, 9767, 2084, 13595, 1630, 8293, 13809,
8403, 5396, 7764, 5354, 8987, 1285, 5642,
7675, 8533, 3832, 5301, 5363, 1945, 3750,
1797, 14537, 365, 3406, 11092, 2797, 2828,
1700, 5600, 12224, 11431, 902, 2894, 10539,

10874, 6137, 6116, 3514, 15370, 2466, 8401,
12716, 15734, 9538, 14628, 9986, 9610, 2544,
8581, 11283, 11904, 8033, 791, 7201, 12799,
4647, 15835, 402, 14945, 14163, 8459, 12795,
15101, 15714, 3792, 9927, 12618, 9530, 8564,
1736, 891, 15706, 148, 3681, 12794, 540,
10285, 9, 3922, 6701, 2771, 11348, 15494,
3757, 10219, 4373, 6062, 2913, 9576, 11967,
1698, 15631, 3226, 297, 2096, 4732, 11540,
3776, 11281, 5835, 5932, 15861, 13899, 4663,
2429, 13518, 8482, 7441, 9450, 5527, 9756,
9027, 2249, 10314, 11734, 13693, 6702, 7606,
6360, 5031, 5123, 12088, 13688, 8684, 1959,
5003, 9294, 10043, 12902, 4601, 8979, 12656,
13825, 345, 14913, 10899, 13962, 14445, 2151,
10039.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ

Նոյեմբերի 1-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ. . .	93 ր. 25 Կ.	Բնիլիի վրա 100 մարկ . . .	46 > 20 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	37 > 32 1/2 >	Ռուսի . . .	արծէ. . . 7 > 50 >
Մարսայի կուպոններ . . .	149 > >	Բարսայի դիսկոնտ . . .	6-7 > >
40/0 պետական բէնտա	98 3/4 > >	40/0 պետական բէնտա	291 > >
Ներքին 50/0 առաջին փոխառութ. . .	251 1/2 > >	Երկրորդ . . .	210 1/2 > >
50/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	101 1/2 > >	41/2 0/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	101 1/2 > >
41/2 0/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	103 3/4 > >	41/2 0/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	103 3/4 > >
Պետերբուրգի քաղաքային կուպոն . . .	101 1/4 > >	Մոսկվայի քաղաք. օրինգրաւանք . . .	100 3/4 > >
Օրէնայի . . .	98 > >	Թիֆլիսի . . .	98 > >
Թիֆլիսի կալ. բանկի 60/0 . . .	— > >	50/0 . . .	— > >
Քուպոնային . . .	60/0 . . .	50/0 . . .	— > >

ԽՈՐԱԳԻՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻԿԷԱՍ ԱՐՄՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՅԻՆ

ԵՐԱՍՏՈՒՂԻ			
Բաթ. զուրս է դալին 9 Ժ. 40 ր. առ. . .	11 Ժ. 20 ր. զեւ. . .	Թիֆլիսի հասնում է . . .	9 Ժ. 55 ր. եր. . .
Թիֆլիսի հասնում է . . .	9 Ժ. 55 ր. եր. . .	Թիֆլիսի հասնում է . . .	10 Ժ. 50 ր. առ. . .
Թիֆլիսի հասնում է . . .	10 Ժ. 50 ր. առ. . .	Թիֆլիսի հասնում է . . .	9 Ժ. 30 ր. առ. . .
Բաթ. հասնում է . . .	4 Ժ. 49 ր. . .	Բաթ. հասնում է . . .	9 Ժ. 45 ր. եր. . .

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հին և հոգու համար . . .	7 Ժ. առ. . .	9 Ժամ. առ. . .
Թիֆլիսից զուրս է դալին . . .	Միտում . . .	Պատանու . . .
Վրացի խաղաղ հասնում է . . .	6 Ժ. երեկ . . .	8 Ժ. երեկ . . .
Վ. Ե. Զ. հոգու համար (չեն զեւերում) . . .	7 Ժ. երեկ . . .	8 Ժ. 50 ր. . .
Թիֆլիսից զուրս է դալին 9 Ժ. 30 ր. առ. . .	12 Ժ. . .	— > >

ԲԻՇԵԿ ԶԱՐԳԱՐԵԱՆՑ

Մոսկվայի կայսերական համալսարանի ման-
կաբուժական կլինիկայի նախկին օրդինատոր,
ընդունում է միայն հիւանդ երեխաներին ամեն
օր, ժամի 11 1/2—1-ը: Դարձի օրերը՝ ձրի:
Հասցեն՝ Ստարո-Նիստրոտոսկայա, տ. № 13.
№ 103 (չր.) 18—40

ՀԱՐԿԱՌՈՐ Է ԱՇԱԿԵՐՏ


որը գիտնայ բացի ռուսերէնից և մի փոքր
ֆրանսերէն կարդալ: Հարցնել Յ. Սուզանա-
ճեանցի երաժշտական խանութում:
(№ 127) 3—4

ԲԺՂԿԱՅԻՆ

Յ. Զ. ԼՈՐԻՍ-ՄԻԼԻԲԵՆՆ
Ընդունում է հիւանդներին ամեն օր
5-ից մինչև 6 ժամը երեկոյեան: Վերամի-
նոսկայա, № 19: (№ 127) 3—5

ԿԵՐԵՐԵԱՆ ՀՈՏԵԼԻՑ ՋՈՒՐ

Կայանում է ԱՍԵՆ ՏԵՂ. ԲՈՒՐ
նշանաւոր առևտրականների մօտ:
(21) 3—3



Պողգամի տնկարանի վարչութիւնը
Առաջարկում է
ԱՆՏՈՒՆՅՈՒՆ, ՏԵՄԵԼԻՔՆԵՐ ԵՒ ՄԻԿՐՈՍԿՈՒ
ԾԱՌՆԵՐԻ ԵՒ ԹՈՒՓԵՐԻ
Տ Ո Ւ Ն Կ Ե Ր
Հասցեն՝ Почтово-телеграфная и железнодорожная
станция
С О Б О Л Е В Ъ С ъ д л е ц к о й г у б.
Պատկերադարձ ցուցակ կուղարկվի ցանկացողներին ձրի և ֆրանկո:
1—1
Տնկարանի կառավարիչ Յ. Ր Օ Ֆ Ի Ն Ս Կ Ի

Մինչև նոյեմբերի մէկը լըյս կը տեսնի Հատուածական (պատի)
Օ Ր Ա Յ Ո Յ Ց
Գինը 40 ԿՊԷԿ
Գումարով առնողներին 20% զեւում: Գինը՝ Александрополь Кеворку Сте-
панянц.
(№ 127) 3—3

ԹԻՎԼԻՖՈՒԼԻ ՔԱՐԱՄԵՍԻՆ ՀԱՆՔԵՐԻ ԵՒ ԲՐԻԿԷՏԻ
արդիւնաբերութեան ընկերութեան վարչութիւնը արանով յայտարարում է ի զիտու-
թիւն զնողներին, որ յիշեալ ընկերութեան բրիկէտները վաճառումը լինում է իր տեղում,
պուրը 13 կօպէկով: Մանրամասն պայմանները կարելի է իմանալ հանքերի գրասենեակում:
Հասցեն հեռագիրների համար՝ «Тквибульскія копн, управление», նամակների համար—Ку-
таисъ—Тквибули, Управление Тквибульских копей и брикетного производства.
(№ 124) 6—15

ԼՈՍՏ ՏԵՍԱՆ Մ. ՉՄԵԿԱՆԻ
„Պ Ա Տ Ի“, „Մ Ո Յ Ի“ ԵՒ „Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ“ 1897 Թ.
ՕՐԱՅՈՅՑՆԵՐԸ
Ցանկացողները թող շտապեն յայտնելու, որպէս զի պատուէրները ժամանակին կա-
տարվին:
(№ 120) 8—15

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ
Մեծ պահանջը և ահազին հոշակը մեր հնարած
ԾԱԿԱՅԵԱՑ ՕՂԵԿՈՒՆԵՐ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՈՒՆ ԵՎԱՐՆԵՐՈՎ
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՓՈՇԵՐԻ
ԷԿՍՐԱԿՍ ՊԱՐԱԿԱՎԱՆ ԵԱՍՄԱՆԵՐ ԵՒ ԲԷԶԵԳՈՒՅԻ ԾԱԿԱՅԵՐԵՐՑ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿԻԼԿԵՐԻ և այլն
ստիպում է մեզ հետ միջոցներին ՆԱԽԱՅԵՐՆԵԼ ոչ միայն անուններով, այլ և մեր
մասնագիտութիւնների ներքին սարքին, որպէս զի դրանով մօլորեցնեն հասարա-
կութիւնը և այգալիսով մեծացնեն իրանց արդիւնների վաճա-
ռումը, և այդ պատճառով խնդրում ենք պատուարժան զնողնե-
րին, մեր արդիւնները զնելու ժամանակ, առանձին ուղարու-
թիւն դարձնել Ֆիլմայի և զործարանական մարկայի վրա:
Բարձրագոյն հաստատված ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
5—9 (№ 90—ամս. 5, 20)

ВЕРНАЯ СМЕРТЬ.
ՀՆԴԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ միներին, խլորդներին և ուրիշ կրծողներին
Այս միջոցը արտաբերում է այդ կենդանիներին դիտաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք
չեն մնում գետնաշարի տակ և չեն տարածում զարշահոտութիւն:
ՄԱԿԱՆԵՐԻ ԴԵՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիջաւ: Նա չառ հաճելի հոտ ունի և
բիծ չէ թողնում ձեռնակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա փոշիացնելով նրան, սենեակի օդին
հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանձը և մոմակները:
ՓՈՇԻՄԻՋԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենապարմար միջոցն է բոլոր միջանները և նրանց սաղմերը
բոլորին ոչնչացնելու համար: Այդ փոշին անխախտելի է լուր և մշակներ ոչնչացնելու հա-
մար անկողիններում, ներքնանիւնքում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցե-
ցը և շունենալով նախթաղի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա
համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մարթեղէն իրերը պահելու
համար: Փոշու աղքեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջանների, մրջիկների
հոգէ—գրեթէ վայրկենական է—հետեանքը զարմանալի: Հարցնել զեղալածաւական խանութներում:
(№ 23) 21—50

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԷՐ
ՍՆԵԴԱՐԱՐ ԽՄԻՉԻ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև: Անավերպէն 1894 ԹԺԻ համաշխար-
հային ցուցահանդիսում:
Գլխաւոր պահահատը՝ զեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված
կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում:
(№ 6) (Ե) 40—50